



Office in Yerevan



Հայաստանի Հանրապետություն
բնապահպանության նախարարություն

ՓՈՒՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության միջև

Հայաստանում հասարակական բնապահպանական տեղեկատվության կենտրոնի
ստեղծման վերաբերյալ
(Օրհուսի Հայկական կենտրոն)

Կարևորելով ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումների կայացմանը հասարակական մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիայի կիրառման անհրաժեշտությունը Հայաստանում և որպես կոնվենցիայի դրույթների իրականացման առաջին քայլ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը և Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարությունը (այսուհետ համապատասխանաբար՝ ԵԱՀԿ և Նախարարություն, իսկ միասին՝ հիմնադիր անդամներ), համագործակցելով բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ, որոշեցին ստեղծել Հասարակական բնապահպանական տեղեկատվության կենտրոն (այսուհետ՝ *Կենտրոն*):

Հիմնադիր անդամները իրենց երախտագիտությունն են հայտնում Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության կառավարություններին՝ կենտրոնի ստեղծման գործում վերջիններիս ցուցաբերած ֆինանսական օժանդակության համար:

Հոդված 1

Կենտրոնի նպատակները

Կենտրոն ստեղծելու հիմնական նպատակն է՝ աջակցել հասարակության համար բնապահպանական տեղեկատվության առավել մատչելի դարձնելուն և այդ ոլորտում որոշումների կայացմանն հասարակական մասնակցության խթանմանը: Այսպիսով՝ *Կենտրոնը* նաև պետք է նպաստի բնապահպանական հարցերում թափանցիկ հասարակական միջավայրի ստեղծմանը. ուստի նաև երկրի ընդհանուր ժողովրդավարեցմանն ու կառավարման բարելավմանը:

Հոդված 2

Կենտրոնի տեղադրման վայրը

Օրհուսի հայկական կենտրոնը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության համաժողովների դահլիճում (375002 Երևան, Մոսկովյան 35, երկրորդ հարկ): *Կենտրոնի* աշխատանքային օրերն են. Երկուշաբթի - Ուրբաթ: *Կենտրոնի* գործունեության այլ մանրամասները սահմանվում են *Կենտրոնի* Կանոնակարգում, ինչպես նշված է Հոդված 4-ում:

Հոդված 3

Կենտրոնի խնդիրներն ու գործառնությունները

Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ կարող է ազատ օգտվել *Կենտրոնի* ծառայություններից:

Կենտրոնը ունի հետևյալ խնդիրները՝

- նպաստել Հայաստանում բնապահպանական քաղաքականության մշակման և կիրառման ոլորտում Կառավարության և հասարակական կազմակերպությունների միջև կայուն հարաբերությունների հաստատմանը
- օժանդակել Հայաստանի բնապահպանական կազմակերպությունների և նրանց համար հավանական գործընկերներ՝ միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա կառավարությունների միջև կապի հաստատմանը
- ծառայել իբրև հիմք բնապահպանական հասարակական կազմակերպությունների միջև կոալիցիայի ստեղծման, ինչպես նաև Հարավային Կովկասի երկրների հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության համար:

Վերոգրյալ խնդիրների իրագործման եղանակները՝

- բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին և այլ շահագրգիռ անձանց ապահովել բնապահպանական գրականությունից, ինտերնետից, ՀՀ բնապահպանության նախարարության և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունից անվճար օգտվելու հնարավորություն
- տարածել բնապահպանական խնդիրներին առնչվող տեղեկատվությունը և այն մատչելի դարձնել հասարակության համար
- խթանել բնապահպանական խնդիրների շուրջ հասարակական քննարկումները, դրանով իսկ նպաստելով հասարակական մասնակցությանը որոշումների կայացմանը
- տրամադրել տարածք Բնապահպանության նախարարության, *Փորձագետների և Խորհրդակցական խորհրդի* անդամների, ինչպես նաև այլ պետական ու հասարակական կազմակերպությունների բնապահպանության ոլորտում համապատասխան տեղեկատվական-հաղորդակցական աշխատանքների (հանրային հարաբերությունների) ապահովման համար
- աջակցել արդարադատության մատչելիության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը:

Այս համատեքստում, *Կենտրոնը* և նրա գործունեությունը հավասարապես մատչելի է հավանական շահագրգիռ կողմերի (ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, ընկերակցությունները կամ կառավարական հաստատությունները և միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև շահագրգիռ անձիք) համար: Հիմնադիրները խրախուսում են վերջիններիս օգտագործել *Կենտրոնի* հնարավորությունները իրենց իրազեկության

բարձրացմանն ուղղված ծրագրերի և դրամաշնորհների իրականացման համար՝ որպես հնարավոր շրջանակ:

Հոդված 4

Կենտրոնի կառուցվածքը

Սույն հուշագրով *Կենտրոնի* հիմնադիրները ստեղծում են. (ա) *Փորձագետների խորհուրդ*, որին հանձնում են *Կենտրոնի* տնօրինման իրավունքները և (բ) *Խորհրդակցական խորհուրդ՝ Փորձագետների խորհրդին* օժանդակելու նպատակով:

Հուշագիրը ամրագրում է *Կենտրոնի* գործունեության ընդհանուր կարգը, այդ թվում՝ *Փորձագետների խորհրդի* և *Խորհրդատվական խորհրդի* հիմնական խնդիրներն ու իրավասությունները:

1. Փորձագետների խորհուրդը. Ստեղծման պահին *Փորձագետների խորհուրդը* կազմված է Բնապահպանության նախարարության չորս և ՀՀ Ազգային ժողովի մեկ ներկայացուցիչներից ու *Կենտրոնի* հիմնական նպատակներին և գործառնություններին համապատասխանող ոլորտներում աշխատող չորս փորձագետից (Հավելված I):

Փորձագետների խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու ընթացակարգը, ինչպես նաև *Խորհրդի* շրջականներում որոշումների կայացման ընդհանուր մեխանիզմները սահմանվում են *Կենտրոնի* Կանոնակարգով, որը պետք է մշակվի *Կենտրոնի* գործունեության առաջի երկու ամսում՝ *Խորհրդի* անդամների կողմից: Կանոնակարգը ենթակա է փոփոխության *Փորձագետների խորհրդի* համապատասխան որոշումների համաձայն:

Փորձագետների խորհուրդը նիստեր է անց կացնում առնվազն ամիսը մեկ անգամ:

Փորձագետների խորհրդի խնդիրներն են՝

1. *Կենտրոնի* առօրյա կառավարման վերաբերյալ որոշումների կայացումը, այդ թվում՝ *Կենտրոնին* տրամադրվող միջոցների օգտագործման վերաբերյալ որոշումների կայացումը:
2. *Կենտրոնի* Կանոնակարգի, *Խորհրդանշանի* և գործունեության տարեկան ծրագրի կազմումը և հաստատումը:
3. *Կենտրոնի* գործունեության տարեկան ծրագրի իրագործման ապահովումը:
4. *Կենտրոնի* գործունեության մասին տարեկան զեկույցի նախապատրաստումը:
5. *Կենտրոնի* և Բնապահպանության նախարարության ու այլ աղբյուրների (մասնավորապես՝ ՀՀ Գիտությունների Ակադեմիայի, հասարակական կազմակերպությունների: տարածաշրջանային և միջազգային հաստատությունների) միջև տեղեկատվության փոխանակումը:
6. Գիտնականների, կառավարական հաստատությունների, հասարակական և առևտրային կազմակերպությունների զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց ուշադրության հրավիրումը *Կենտրոնի* գործունեությանը:
7. *Կենտրոնի* վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:
8. Սույն Հուշագրով նախատեսված *Փորձագետների խորհրդի* անդամներին վերագրած գործառնական պարտականությունների իրագործումը (Հավելված I):

Վերոգրյալ աշխատանքները կատարում են *Փորձագետների խորհրդի* անդամներն՝ անհատույց:

Խորհուրդը *Կենտրոնն* օգտագործում է պարբերական հանդիպումների և հանրային միջոցառումների անցկացման համար (ինչպես օրինակ՝ կլոր սեղաններ, սեմինարներ, մամլո ասուլիսներ և այլն)՝ հասարակության ուշադրությունը *Կենտրոնին* բերելու նպատակով:

2. Խորհրդակցական խորհուրդ. *Խորհրդակցական խորհուրդը* կազմված է *Կենտրոնի* հիմնական դոնորների, շահագրգիռ դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից (Հավելված II): Այսպիսով՝ *Խորհրդակցական խորհուրդը* կներկայացնի դոնորների և քաղաքական աջակիցների համայնքը:

Խորհրդակցական խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու ընթացակարգը սահմանվում է *Կենտրոնի* Կանոնակարգով:

Խորհրդակցական խորհուրդը իրականացնում է *Կենտրոնի* գործունեության մոնիտորինգ և մեկնաբանում է Կենտրոնի տարեկան զեկույցն ու գործունեության տարեկան ծրագիրը: Այն նաև խորհրդատվություն է տրամադրում և օժանդակում է Կենտրոնի տարբեր գործունեությունների իրականացումը, խորհրդատվություն է տրամադրում *Փորձագետների խորհրդին* և աջակցում հասարակական կազմակերպությունների համապատասխան նախաձեռնությունների իրականացմանը:

Խորհրդակցական խորհրդի անդամները հանդիպումներ կանցկացնեն եռամսյակը մեկ անգամ կամ *Փորձագետների խորհրդի* առաջարկությամբ:

Խորհրդակցական խորհրդի անդամները կարող են մասնակցել *Փորձագետների խորհրդի* ամսական հանդիպումներին՝ առանց ծայնի իրավունքի:

Հոդված 5

Կողմերի ներդրումներն ու պարտականությունները

Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում ԵԱՀԿ-ն կապահովի քսան հինգ հազար ԱՄՆ դոլլարին համարժեք հետևյալ ներդրումները.

- *Կենտրոնի* վերանորոգում և կահույքի ձեռք բերում
- հիմնական տեխնիկական սարքավորումների ձեռք բերում, ներառյալ երկու համակարգիչ, մեկ տպիչ սարք, պատճենահանող մեքենա և վիդեո-կենտրոն
- *Կենտրոնի* գրադարանի համար գրքերի և նյութերի սկզբնական հավաքագրում
- *Կենտրոնի* ինտերնետային էջի ստեղծում (որը կտեղադրվի www.environment.am հասցեում):
- *Կենտրոնի* գործունեության առաջին տարվա ընթացքում ինտերնետային կայքի ապահովում:
- *Կենտրոնի* գործունեության առաջին տարվա ընթացքում ընթացիկ շահագործման ապահովում
- *Կենտրոնի* սկզբնական ներկայացուցչական/գովազդային միջոցառումների կազմակերպում:

Բնապահպանության նախարարությունն անհատույց կապահովի՝

- Նախարարության համաժողովների դահլիճը որպես *Կենտրոնի* տեղակայման տարածք՝ հոգալով էլեկտրաէներգիայի, ջեռուցման և ընթացիկ պահպանման ծախսերը:
- Օրհուսի Կոնվենցիայի դրույթների համաձայն տեղեկատվության տրամադրումը,
- մեկ աշխատակից *Կենտրոնի* համար՝ վճարելով համապատասխան աշխատավարձը:

Բնապահպանության նախարարությունը պատասխանատվություն է կրում *Կենտրոնի* գույքի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գույքի կորստի, հափշտակության, վնասվելու կամ լուրջ անսարքության դեպքում Փորձագետների խորհուրդը զեկույց է ներկայացնում Խորհրդակցական խորհրդին:

Գույքի վնասվելու կամ լուրջ անսարքության դեպքում Փորձագետների խորհուրդը կարող է դիմել Խորհրդակցական խորհրդին համապատասխան աջակցություն ստանալու նպատակով:

Հոդված 6

Սույն Հուշագրի մեկնաբանման կամ կիրարկման հետ կապված ցանկացած տարածայնություն լուծվում է հիմնադիր անդամների միջև խորհրդակցությունների միջոցով:

Սույն Փոխըմբռնման Հուշագիրը և նրա անբաժանելի մաս հանդիսացող երկու հավելվածները, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և շարունակում է գործել Կենտրոնի գործունեության ողջ ընթացքում: Հուշագրում կարող են փոփոխություններ կատարվել հիմնադիրների համաձայնությամբ:

Կազմված է Երևան քաղաքում 2002 թ. մարտի 19-ին, անգլերեն և հայերեն լեզուներով, իրավական ուժ ունեցող երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարություն

Ստորագրություն

Ստորագրություն

Դեսպան՝ Ռոյ Ռիվ
Գրասենյակի ղեկավար

ՀՀ բնապահպանության նախարար՝
Վարդան Այվազյան

Կնիք

Կնիք

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ
375019 Երևան, Զարոբյան 60
Հեռախոս՝ 374 (1) 545845, 541063
Ֆաքս՝ 374 (1)561138
Է-փոստ՝ eea@osce.am

**Հայաստանի Հանրապետություն
բնապահպանության նախարարություն**
375002 Երևան, Մոսկովյան 35
Հեռախոս՝ 374 (1) 52 10 99

ՀԱՎԵԼՎԱԾ I

Փորձագետների խորհուրդի կազմը

Փորձագետների խորհրդի անդամներից յուրաքանչյուրը պատասխանատվություն է ստանձնում գործունեությունների հատուկ ոլորտի համար: Ստորև նշված խնդիրները կիրառործվեն Փորձագետների խորհրդի անդամների կողմից կամավորական հիմունքներով:

Բնապահպանության նախարարության ներկայացուցիչներ

Անուն	Նախարարությունում զբաղեցրած պաշտոնը	Պարտականությունը
Տիկին Աիդա Իսկոյան	Բնապահպանության նախարարի խորհրդական, Օրհուսի կոնվենցիայի իրականացման պատասխանատու	<ol style="list-style-type: none"> Նախարարության կողմից Կենտրոնին բնապահպանական տեղեկատվության տրամադրման կոորդինացիա, Կենտրոնի միջոցով հասարակության իրազեկության բարձրացում Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնական սկզբունքների՝ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության վերաբերյալ:
Պարոն Արծրուն Պեպանյան	Մամլո քարտուղար	<ol style="list-style-type: none"> Կենտրոնի և Նախարարության միջև տեղեկատվության փոխանակման ապահովում: Հասարակության հետ կապի ապահովում:
Պարոն Գեորգի Արզումանյան	Միջազգային համագործակցության վարչության պետ	<ol style="list-style-type: none"> Նախարարության կողմից իրականացվող միջազգային համագործակցության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
Պարոն Բորիս Ղազարյան	Պետական բնապահպանական փորձաքննության բաժին, Փոխստնօրեն	<ol style="list-style-type: none"> Կենտրոնում Բնապահպանական փորձաքննության վերաբերյալ պարբերաբար հասարակական լսումների կազմակերպում; Կենտրոնին Բնապահպանական փորձաքննությանն առնչվող տեղեկատվության տրամադրում և Կենտրոնի միջոցով այդ տեղեկատվության տարածում:

ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ

Անուն	Զբաղեցրած պաշտոնը	Պարտականությունը
Տիկին Գոհար Ղազինյան	Սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ	<ol style="list-style-type: none"> Ազգային ժողովի և Կենտրոնի միջև սոցիալական, առողջապահության և բնապահպանության ոլորտներում տեղեկատվության փոխանակում: Կենտրոնում բնապահպանական օրենսդրական նախագծերի հասարակական լսումների/քննարկումների կազմակերպում:

Հասարակական փորձագետներ

Անուն	Փորձաքննության ոլորտը	Պարտականությունները
Տիկին Կարինե Դանիելյան	Կայուն Ջարգացում	1. Կենտրոնին Կայուն զարգացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և Կենտրոնի միջոցով այդ տեղեկատվության տարածում:
Պարոն Էդիկ Բաղդասարյան,	Ջանգվածային լրատվամիջոցներ	1. ՋԼՄ-ների հետ Կենտրոնում պարբերաբար միջոցառումների կազմակերպում, 2. Կենտրոնի գործունեության հրապարակայնացում, 3. Կենտրոնին Հետաքննող լրագրողների ընկերակցության պատրաստած Ֆիլմերի և այլ համապատասխան նյութերի տրամադրում:
Տիկին Սոնա Այվազյան	Հմուտ կառավարում և թափանցիկություն	1. Կենտրոնին պետական և միջազգային մակարդակով իրականացվող հմուտ կառավարման գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
Պարոն Բորիս Գաբրիելյան	Գիտություն և Էկո-կրթություն	1. Կենտրոնի և գիտական հասարակության միջև տեղեկատվության փոխանակման ապահովում 2 Թեմատիկ դասախոսությունների կազմակերպում 3 Բնապահպանության ոլորտում կրթության և դաստիարակության վերբերյալ տեղեկատվության փոխանակում

ՀԱՎԵԼՎԱԾ II

Խորհրդակցական խորհրդի կազմը

Խորհրդակցական խորհրդի անդամները. Կենտրոնի հիմնադրման պահին Խորհրդակցական խորհրդի անդամները կլինեն հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչներ՝

1. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն:
2. Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն:
3. Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատուն:
4. Հայաստանում Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության դեսպանատուն:
5. Միացյալ Ազգերի Կազմակերպության Հայաստանյան գրասենյակ:
6. Եվրոպական Միություն, Եվրոպական հանձնաժողովի պատվիրակություն Վրաստանում և Հայաստանում, Երևանյան գրասենյակ: